

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվանը 6 ռուբլի:
Առանձին համարները 7 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյանիս խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисъ. Редакція «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

ՏԵԼԵՓՈՆ № 253.

ՄՇԱԿ

Խմբագրությունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից):

Յայտարարութիւն ընդունուում է ամեն լիզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
խրաբանչիւր բառին 2 կոպեկ:

ՏԵԼԵՓՈՆ № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՆԵՐԿԱՅ 1896 ԹԻԱԿԱՆԻՆ

ՄՇԱԿ

24-րդ ՏԱՐԻ

24-րդ ՏԱՐԻ

ԴՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՓԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

Հրատարակվում է Թիֆլիսում, նոյն գիրքով, նոյն պրոգրամայով և նոյն ուղղու-
թեամբ: Մենք ստանում ենք սեփական հեռագիրներ:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄ Է

«ՄՇԱԿ» տարեկան գինը թէ Ռուսաստանում և թէ արտասահմանում 10 ռուբլի է, տաճար և
մէկ և տաճար ամսականը՝ 9 ռ., ինչ և ութ ամսականը՝ 7 ռ., վեց ամսականը՝ 6 ռ.,
հինգ ամսականը՝ 5 ռ., չորս ամսականը՝ 4 ռ., երեք ամսականը՝ 3 ռ., երկու ամսականը՝ 2 ռ., մի ամսա-
նը՝ 1 ռուբլի:

«ՄՇԱԿ» գրվել կարելի է ՌՄԲԱԿԱՆԱՆԸ (Բաղադրաբան և Բարձրակարգ փողոցների անկիւն):
կայսրութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿ» գրվելու համար, և առհասարակ նամակներ և
ծրարներ ուղարկելու, պէտք է դիմել հետևեալ հասցեով. ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ», իսկ
արտասահմանից՝ Tiflis, Rédaction du journal arménien «MSCHAK».

Եղիսաբեթ Զաքարեան Գէորգեանց իր որդեց հետ և խաչատուր
Բաղդասարեան Գէորգեանց սրտի ցաւով յայտնում են բարեկամներին և
ազգականներին՝ առաջինները—իրանց թանկակէր ամուսնու և հօր, վերջինը՝ իր
կեղծոր, վերին-Աղաւիթի բնակիչ և առաջին գիւղի վաճառական

Ս Տ Ե Փ Ա Ն Բ Ա Ղ Դ Ա Ս Ա Ր Ե Ա Ն Գ Է Ո Ր Գ Ե Ա Ն Յ Ի

յանկարծակի մահը, որ տեղի ունեցաւ յունվարի 27-ին, շաբաթ օր: Հոգեհան-
դեստ կը կատարվի ամեն օր, երեկոյեան ժամի 7-ին: Յուշարկաւորութիւնը տեղի
կունենայ հինգշաբթի օր, փետրվարի 1-ին, լիւիցեանի տանից, Արզնիկական
փողոց № 20 Սօլոյակի, դէպի Մոզնուս. Գէորգեանց եկեղեցին: Թաղումը կը լինի խօ-
շկականքի գերեզմանատանը:

1—2

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՁԱՓ ՈՒ ՍԱՀՄԱՆ ԶԸ ԿԱՅ

I

Կայ Մոսկվայում մի լրագիր, որի առաջ մե-
ղաւոր են այն բոլոր մարդիկ, որոնք յանգում
են իրանց սեփական կարծիքն ու միտքն ունե-
նալ: Այդ մարդիկ կարող են լինել աշխարհի
վրա գոյութիւն ունեցող բոլոր ազգերից—ուս, ֆին-
լանդացի, գերմանացի, հայ, էսկիմոս, նոյն
իսկ այդինքնացի բնիկ: Մի և նոյն է: Ով
մարդ է և չունի այն կերպարանքը, այն դու-
րանն ու կազմուածքը, որոնց սիրում է այդ լը-
րագիրը՝ նա վատերից վատն է, հրէ է, յանցա-
ւոր է, և նրան իսկոյն պէտք է չչարել, կարգի
բերել, չոխել:

Վերջին տարիներս նա կարծես յոգնել է այն
կատաղի կուրից, որ մենակ, առանց հակառա-
կորդի, վարում էր Ռուսաստանի ծայրերում աղ-
բող ազգերի դէմ: Երբեք դուռն էր, ինքը կար-
գում: Ինքը փրկում էր, ինքն իր վրա հիւ-
նում: Եւ ահա, կարծես առ ժամանակ բաւական
համարելով այդ քաջագործութիւնները՝ նա գը-
տաւ կովկասը, ուր նոյնպէս այդպեղ ազգեր են
ապրում: Այդտեղ էլ նա գտաւ շատ մարդիկ,
որոնք յանգում են այնպէս չը լինել, ինչպէս
նա է ուղղում: Այսպէս նոյն կատաղի արշաւանքը
դէպի այդ աշխարհը, ուր մարդիկ հանգրստ
ապրում են իրանց համար:

Պէտք էին փառանք մեղադրելու, անուանա-
րկելու, գրադարանելու համար: Եւ գտնվեցան այդ
փաստերը. բայց ոչ թէ իրականութեան մէջ,
այլ հարուստ երեակայութիւնների աշխարհում:
Եթէ նայեք այդ լրագրի այն համարին, որ լոյս
է տեսել Փրիստոնի ծննդեան 1896 տարեշրջա-
նի օրը՝ դուք կապէք, տեսնելով թէ ինչ և ինչ
բաների է ընդունակ մարդկային գրգռված ֆան-
տազիան: Շնորհալուստների դարը չը կարծէք
թէ անցել է: Երեակայութիւնը դարձեալ տա-

նում է մարդկանց՝ հրէշաւոր առասպելների, ան-
հեթեթութիւնների աշխարհը, և այնտեղ նրանք
գտնում են ամեն տեսակ աշխարհայեցողիւն,
վատութիւն: Արաքական հէքիաթների անմահ
հեղինակը երեակայութեան աշխարհում հիւսում
էր կախարդական պատկերներ, սիրուն պատ-
մութիւններ էր ստեղծում նրանցից և տալիս էր
իր ունիւղիւրներին եթէ ոչ իրեն իրական ճշ-
մարտութիւն՝ գէթ ինչպէս սիրունիկ իրեր, ո-
րոնք կարող էին զբաղեցնել մարդկանց: Իսկ
ժամանակակից ֆանտազիաները—հարազատ զա-
ւակներ իրանց դարի և ապականված միջուկների
—արտագրում են միմյանիս լուրջ, հոտած ու
բարբոսանած պրօզա, որ ընդունակ է մարդուն
խելագարութեան հասցնել:

Տեսնենք: Պատմում է մի անհեթեթ առասպել
այն մասին, թէ ինչպէս հայերը կործանում,
ոչնչացնում, եղծում են հնութեան յիշատակա-
րանքները: Մի անհասական դէպք էլ դա, այլ
մի ամբողջ վանդալական արշաւանք, որ տեղի է
ունենում ցերեկվայ լոյսով, ամենքի աչքի ա-
ռաջ: Երկարագրութիւնը մանրամասն է. ամեն
ինչ կայ տպաւորութիւն, յուզմունք պատճառե-
լու համար. մի կողմը տեսնում էք բիւրիական
Երեմիային, որ ողբում է բարբարոսների աւե-
րանքների վրա, որ կուրծք է ծեծում, օգնու-
թիւն է կանչում: Մի այլ տեղ նստած է ինքը,
վարիսեցի ֆանտազիան, որ աղաղակում է,
թմրվածաբար, մարդկանց սրտին և սրբազան
զգացումներին կաշտում է անուշ... Ազգայն է
հաւատալ, որ մեր ժամանակների վանդալները
հայերն են, որոնք անխնայ, ամեն օր, ամեն
գիշեր, առանց դադարի, առանց մի րօպէ հան-
գիստ առնելու, կործանում են, աւերում են,
քանդում են Վրաստանի հին բերդերը, եկեղե-
ցիները. ջնջում են վրացերէն արձանագրու-
թիւնները և իսկայն հայերէն արձանագրու-
թիւններն են փորում: Լանկիմանուր, միջնադա-
րեան բոլոր բռնակալները միասին հաւաքված
այնպիսի բարբարոսութիւններ չեն գործել, ո-
րոնք կատարվում են այժմ...

ԲՈՎԱՆԳԱՎՈՐՈՒՄ

Անդրկական պարլամենտի բացման առիթով.
Պէտք է բարեխօսել. կապույտ գիրքը.—ՆԵՐՔԻՆ
ՏԵՍՈՒԹԻՒՆ. Օրէցօր. Մի ուսու լրագրի կարծիքը.
Մատենագրութիւն. Նամակ կողմնակից. Նամակ
Ձանգեղուրից. Նամակ խմբագրութեան. Ներքին
լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Վերջին տեղե-
կութիւններ.—ԽԱՆԻ ԼՈՒՐԵՐ.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—
ԲՈՐՍԱ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲՈՆԱՍԻՐԱ-
ԿԱՆ. Ձախ ու սահման չը կայ.

ԱՆԳԼԻԱԿԱՆ ՊԱՐԼԱՄԵՆՏԻ ԲԱՅՈՒՄԸ

Այսօր, յունվարի 30-ին, կամ նոր օ-
մարով փետրվարի 11-ին, բացվում է անգ-
լիական պարլամենտը, որին այնքան ան-
համբերութեամբ սպասում էր ամբողջ քա-
ղաքական աշխարհը:

Անգլիական պարլամենտի ներկայ շրջանը
պէտք է նշանաւոր դեր խաղայ Անգլիայի
պարլամենտական կեանքի մէջ, ի նկատի
ունենալով, որ նրա վերջին նիստի փակու-
մից յետոյ տեղի ունեցան վերին աստիճա-
նի կարեւոր քաղաքական դէպքեր և անգ-
լիական դիպլոմատիան, արտաքին քաղա-
քականութեան ասպարեզում, մի շարք
պարտութիւններ կրեց, որոնց մասին նա
պէտք է հաշիւ և բացատրութիւն ներկայ-
ացնի պարլամենտին:

Այս է պատճառը, որ մինչև այսօր,
այսինքն պարլա մենտի նիստի բացման օրը,
ոչ միայն Անգլիայի նշանաւոր քաղաքական
գործիչները, այլ և միւսիւրները աշխա-
տում էին իրանց ճառերով պարտաստել
Անգլիայի հասարակական կարծիքը և ազ-
գին նրա վրա: Այս է պատճառը, որ պահ-

պանդական կարեւոր, նախ կօշտիաների
միւսիստը Չէմբերլէնի, իսկ այս օրերս իր
պարագլուխ լորդ Սօլսբերիի միջոցով, հան-
դէս դուրս եկաւ և փորձեց արգարացնել
իր գործունէութեան եղանակը ու պարզել
Անգլիայի առաջ այն հայեացքները, որոն-
ցով նա ղեկավարել է Անգլիայի արտաքին
քաղաքականութիւնը:

Սակայն երկու միւսիստների տրտա-
նած ճառերի մէջ ահադին տարբերութիւն
կայ: Որքան Չէմբերլէն խօսում է կարուկ և
խիստ կերպով այնքան էլ մարկիզ Սօլսբերի,
իբրեւ իսկական դիպլոմատ, խօսում է
չափաւոր օճով և խուսափողական ձե-
ւով: Մանաւանդ նրա ճառի այն մասը, որ
վերաբերում է Թիւրքիային, իր անողոշ և
անխտաճ գոյնով միանգամայն հակասում
է այն կատաղի շանթերին, որոնցով պահ-
պանողական կուսակցութեան պետը, ան-
ցեալ տարի, դուրս եկաւ սուլթանի դէմ և
յուզեց ամբողջ Եւրոպան: Միայնակ-Նա-
հանգներն և Գերմանիայի հետ ունեցած
վէճերի, ինչպէս և Տրանսիլանի պատճա-
ռով, Սօլսբերիի տուած բացատրութիւն-
ները նոյնպէս իրանց մեղմ և զիջող բնա-
ւորութեամբ բոլորովին տարբերվում են
այն խիստ աղաղակներից, որ արձակում էր
պահպանողական մամուլը այդ հարցերի
առիթով:

Հայոց հարցի մասին Սօլսբերիին յայտ-
նեց, թէ խօսք չէ կարող լինել այն մասին,
որ Անգլիան պատերազմ յայտնի Թիւրքի-
ային հայերի պատճառով: Հայկական ըն-
փօրմների իրադրոճման վրա պէտք է հըս-
կեն բոլոր վեց մեծ պետութիւնները: Անգ-

ղրացի ազգերից իսկն բարբարոսաբար: Անցեք
մի անգամ Ղարաբաղի և Չանգեզուրի լեռներով.
անթիւ ու անհամար աւերակներ են փռված
ձեր առաջ. կարելի է ասել որ քաղ չէք փոխի,
չը հանդիպելով որ և է աւերակի:

Ինչ դրութեան մէջ են նրանք: Ի հարկէ, մո-
ռացված, իրանց ճակատադրին թողնված աւե-
րակներ, որոնք հեղհեղեղ աւելի և աւելի աւեր-
վում են, ոչնչանում Կասեղը նոյն իսկ աւելի
վատը: Շատ և շատ տեղերում հողակաւ հին,
գեղեցիկ վանքեր, ու եկեղեցիները թուրքերի
ձեռքին են, ոչնչաւ ու տաւար պահելու տեղ են
նրանց համար: Եւ ասիւր ով ունի կարողութիւն
և ժամանակ հազար ու մի հուրթիւնների վրա
ուշադրութիւն դարձնելու համար:

Եթէ հաւատանք ֆանտազիաներին, ընդունենք
որ հայերը այնքան կարօտութիւն ունեն օտար
աւերակների՝ մենք պիտի տեսնէինք, որ այդ
ազգը նախ քան դէպի Վրաստան մի բարբարո-
սական արշաւանք սկսելը՝ գէթ մի քանի փորձե-
րով ցոյց տուած կը լինել, որ իր սեփական,
անվեճ հնութիւններին որ և է նշանակութիւն և
արժէք տուած լինել, պիտի տեսնէինք զոնէ մի
քանի տեղ, որ հայ կղերականը այնքան հասկա-
նում է հին վանքի նշանակութիւնը, որ իր կլա-
սիկական ծուլութեան մի քանի ժամերը նուի-
րում է քանդակած վերաշինութեան, վերջնական
քաջայայտ զիմարեղուն: Բայց կոյ այդպիսի
բան... Մենք չօ գիտենք և մինչև անգամ առած
ունենք—արտաքին տեսնողին է այրում, ներ-
քին—ինձն:

Մեղադրել հայերին աւերակների գողութեան
մէջ—այդ էր պակաս: Գոնէ մեղադրէիք մի
ուրիշ տեսակ գողութեան մէջ. բայց աւերակ-
ներ... Այդ բարբիւր շատ և շատ ունի նա իր
տանը:

Լ.

նում, որտեղ ապրուստի միակ աղբիւրը կազմում է երկրագործութիւնը:

Ամենալաւ ցորենը արժէ պուրը 30 Կ. և առնող էլ չը կայ. իսկ գիւղացին պարտաւոր է վճարել բոլոր արքունի և հասարակական պարտքերը: Եթէ աւելացնենք նաև, որ աւազակապետ Նաբիի յարձակումներից պաշտպանվելու համար Արմանիկը պարտաւորված էր ամբողջ տարին իր 10 ձիաւոր պահել, ամսական իւրաքանչիւրին 15 բուրլի վարձով՝ այն ժամանակ գիւղացու աննախանձելի նիւթական դրութիւնը պարզ կը լինի:

Չմոռը մտաւ, Նաբին անհետացաւ: Այժմ արքաւոր գիւղացին կուր և միւսը մի սուրի թշնամու հետ, որի դէմ դժբախտաբար նա ոչ զէնք ունի և ոչ պաշտպանվելու միջոց: Այդ թշնամիներն են մեր հոգեւոր գործակալները, որոնք անխնայ կերպով ննջում են աջ ու ձախ, խեղճութիւն չը դնելով հարուստի և աղքատի մէջ: Հոգեւոր կանոնների համաձայն պէտք է աղքատ երկրատարութիւց, նրան պահելու համար, սխտոստարկ քիչ պահանջով, բայց հայր գործակալների համար 10—12 բուրլի դարձել է օրէնքի պահանջ, որոնցից միայն 3—4 բուրլի նշանակելով անգործազորի մէջ, տալիս է անդրադէտ գիւղացուն, որը այդ ընդհանում է հալած իւրի սեղ. բուրլով չը կատարւելով, որ աւելորդը մասնւմ է Տէր հայրերի գրպանը: Այս վերջինից, ի հարկէ, չի զրկւում և ծխատէր քահանայ, ստանալով 1—2 բուրլի այն բաջովիւն համար, որ կարողացաւ համոզել իր միաթոռ ժողովրդին: Գործակալի արգար պահանջի վերաբերմամբ: Ահա թէ ինչու ծխատէր քահանայների «յայտարարութիւնները» այնպէս չառ հաստատուում են գործակալների «հրամաններով» և միշտ չհասը հաս է լինում:

Մենք միանգամայն դարձանք ենք, որ Տաթևի հոգեւոր կառավարութեան կարգադրութեան համաձայն հոգեւոր չնչերը ցուցակի մէջ մտնելու համար, գործակալները պահանջում են իւրաքանչիւր չնչից մի բուրլի կամ 4 պուր. ցորեն: Բայց այսպիսի միջոց էլ միշտ չի հնար, և ոչ պէտք է իմանայ:

Մէլեր

ՆԱՍԱԿ ԽԱՐԱԳՈՒԹԱՆ

Մոսկւա, յունվարի 20-ին
Խանարհաբար խնդրում եմ տեղ տալ այս երկտողին «Մշակի» մէջ:

Ուրախութեամբ յայտնում ենք, որ Մոսկւայի հայ ուսանողութեան գիւմարները արձապահ գտան հասարակութեան մէջ, — բայցի որ Ուղեւի նախաձեռնութեամբ Աստուածային հանգանակված 600 ր., որի մասին արդէն գրված էր «Մշակի» մէջ, վերջին օրերս այստեղ ստացվեց յօգուտ պատեղի չքաւոր ուսանողների 1,000 բուրլի պ. Պոլտուկոսեանից, հանգանակված թագուում, և 100 բուրլի, Եղբ. Բուրաղեաններից:

Մեծարգոյ պարտնենքին ուսանողութիւնը յայտնում է իր խորին շնորհակալութիւնը:

Գ. Տատեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Երէկ, յունվարի 29-ին, Ռուսաց գործակալութեան միջոցով Վիեննայից ստացանք հետեւեալ հեռագիրը. «Կ. Պոլսից ստացված տեղեկութիւններին նայելով՝ Ձէյթունի անձնատուր լինելու մասին բանակցութիւնները անաջող անցան, որովհետեւ երկու կողմերից ամեն միւր մերժում է միւս կողմի առաջարկված պայմանները: Թուրքերը պահանջում են, որ ապստամբները զէնքերը վայր դնեն, իրանց պարագլուխները յանձնեն և կրկին չնեն իրանց քանդած զորանոցները: Ձէյթունցիները պահանջում են, որ մահաւանդաններն ևս գնալով արվին, սնդուում են, որ իրանք պարագլուխներ չունեն, և թէ զորանոցները քանդել են իրանք թուրքերը: Ապստամբները նոյնպէս պահանջում են, որ անցնել վեց տարուց և յաջորդ երեք տարուց համար զինու. հարկից ազատուն և քրիստոնեայ կայսրական նշանակվին: Հիւստանները կարծում են, որ իրանց հրահանգները սպառված են»:

Յունվարի 28-ին, Ռուսաց հեռագրական գործակալութիւնից Պետերբուրգից ստացանք հետեւեալ հեռագիրը. «Թիֆլիսից հեռագրում են,

յունվարի 23 և 24-ին Թիֆլիսում փակվեցին մի քանի զորոցներ, գլխավորապէս աղջկերանց, հայ-լուսաւորչական եկեղեցիներին կից: Այդ զորոցները համարված են իբրեւ ոչ համապատասխան 1884 թ. փետրվարի 16-ին Բարձրագոյն հաստատված կանոններին հայ-լուսաւորչական եկեղեցական-ծխական ուսումնարաններին մասին, քանի որ նրանք չեն պահպանում ծուլաների հաշիւը: Առաջարկվել էր յանձնել այդ զորոցները ժողովրդական լուսաւորութեան մի-նիստրութեան, որի համար և երկու անգամ ժամանակամիջոց էր նշանակվել. բայց հայ-լուսաւորչական հոգեւորականութիւնը գերադասեց բուրլովին փակել նրանց»:

Մենք ստացանք թէ հրահանգն այս տարվանից հրատարակվող «Աստղ Արեւելեան» լրագրի առաջին համարը: Արտադրել խղճուկ, բովանդակութիւնը աղքատ, լեզուն անմալ, յօդուածները խալ. — ահա առաջին համարի տպագրութիւնը: Եթէ թէ՛ հրահանգն այդ լրագրից ցանկանում է աղքատութիւն ունենալ՝ պէտք է աշխատի որ յաջորդ համարները ոչնչով նման չը լինեն առաջին համարին:

Յունվարի 27-ին, երեկոյան 7 ժամին, Սլոնիսում, Գանովսկայա և Սաղովսկայա փողոցի անկիւնում տեղի ունեցաւ մի սպանութիւն: Սպանված է Մահաւոր-Ստեփան Գեորգեան: Նրան հաղորդվեց զէնքը այնքան ծանր էր, որ դեռ տուն չը հասած՝ մեռաւ: Սպանողները անպայման են և մինչեւ այժմ էլ չեն գտնված: Գեորգեան առաջին գիւղի վաճառական էր. նա Վերին-Ագուլիսի մօտ գտնվող Քաղաքի գիւղի բնակիչ էր, մօտ 60 տարեկան Գեորգեանները ունեն աւաւարական մեծ տուն և յայտնի են իբրեւ խոշոր զբաւառէր. նրանց կարողութիւնը, ինչպէս ասում են, համարում է միլիոնի: Այդ սպանութեան մասին, Թիֆլիսից, «Ռուսաց հեռագրական գործակալութեան» միջոցով ուղարկված է Պետերբուրգ հետեւեալ հեռագիրը, որ ստացանք երէկ, յունվարի 28-ին. «Թիֆլիսում, չաբաթ օր, երեկոյան դէմ, փողոցում, իր բնակարանի մօտ, գտնակի հարուստով սպանվեց Թիֆլիսի առաջին գիւղի վաճառական Գեորգի: Յանցանքը գործել են երկու անյայտ անձինք, որոնք փախան: Հանգուցեալը հարուստ էր և ժլատ: Սպանութեան պատճառները խորհրդաւոր են: Հասցեագրական նպատակ, ինչպէս երևում է, չէ եղել»:

Մեր յայտնը չարգարացան: Սկսած արդէն քննութիւն կովկասում չի լինելու Գանի այդպէս է հաւատարմութեամբ «Петербург. Вѣдомости» լրագրից, բաղելով իր տեղեկութիւնը «կատարելապէս հաստատ աղբիւրից»: Մենք առիթ ունենք չը հաւատալու Պետերբուրգի լրագրի «հաստատ աղբիւրին», քանի որ այդ լրագրի նոր խմբագիր իշխան Ռոստոմիլի, բաւական տեղեկակ է կառավարչական բարձր չը ծանոթանալ:

Մեզ հաղորդում են Գանձակից, որ քաղաքագլուխ պաշտոնի համար ամենահամաձայն կանգնելու են Ի. Օ. Կոպիտիլեցի, որ նախապես ճարտարապետի պաշտոն է վարում այդ քաղաքում:

Յունվարի 25-ին, Քաղաքային վանձանակից միաց նշանաւոր հոգեւորականներից մէկը, Գաբրիէլ Եպիսկոպոսը:

Լսում ենք, որ Մոսկւայի գիւղատնտեսական ընկերութիւնը դիմել է կովկասեան գիւղատնտեսական ընկերութեան առաջարկելով, որ սա ևս միանայ այն ընդհանուր խնդրերին, որը պէտք է ուղարկվի երկրագործութեան միջնորդին՝ կազմելու մի ժողով Պետերբուրգում, որի նպատակը պէտք է լինի քննել, թէ ինչ կերպով կարող են գիւղատնտեսական ընկերութիւնները լայնացնել իրանց գործունէութիւնը և ստանալ իրանց ծախքերի համար անհրաժեշտ դրամ: Հաւատացած ենք, որ մեր գիւղատնտեսական ընկերութիւնը համարվում էր վերաբերի այդ առաջարկին, քանի որ ինքը մի քանի անգամ յարուցել է նոյն խնդիրը և նոյն իսկ այն նիստում, որին ներկայ էր երկրագործութեան մի-նիստր Նիմոլով: Թիֆլիս կեւած ժամանակ:

Կիրակի օր, ամսիս 28-ին, Թիֆլիսի Հայուհեաց բարեգործական ընկերութեան կար ու ձի զբոյրոցում տեղի ունեցաւ խոհարարական դասընթացի հարցաքննութիւնը: Այս տարի դասընթացում տեղի է ունեցել հետեւեալ փախխու-թիւնը. աշակերտուհիները սովորում են ոչ թէ երկու ամիս, այլ երեք ամիս, և դառնում են միայն գործնական պարագլուխներով:

Մեզ խնդրում են տպագրել. «Էջմիածնեցոց եկեղեցու ծխականները երէցփոխի և միաբան քահանաների յայտարարութեամբ կիրակի, յունվարի 28-ին, ժողովի էին հրաւիրված: Ժողովը՝ չը կայացաւ, որովհետեւ ընդամենը հինգ-վեց ծխական էին եկել: Կողորդութեան սկսեցին արտասուք թափել. բայց և այնպէս յայտնուեց, որ ծուխը ժողովի է հրաւիրվել, 1) Կիրակի օրերը պատարազ յետաձգելու, 2) նոր ժամապայկներ գնելու և 3) երէցփոխ խմբին ուժիկ նշանակելու համար խորհրդակցելու: Հետաքրքրական է իմանալ, ինչն ենք հարկաւոր է մի քանի բուրլի ծախսել՝ ծխական ժողով են հրաւիրում, իսկ բժիշկ Միրիմանեանի ազգականներին նուիրած հաղար լուրին ծախսելիս մարդու քան չեն ասում: Բայց և այնպէս՝ լաւ է ուշ, քան երբեք»:

Ղուբայից, Մեղքին Սալամեղեանց նուիրել է 1896 թ. «Մշակի» մի օրինակ կապուսովի թիւ Բ քաղաքի գրադարանին:

ԳԱՆՁԱԿԻՑ գրում են «Кавказ» լրագրին. «Յունվարի 25-ին սկսվեցին քաղաքային ընտրութիւնները: Ընտրողներ ներկայացան 586 անձ. ձայնաւորների ցուցակը մտել են մինչև 209 անուն, որոնցից 11 հոգի հրաժարվեցին ընտրվելու: Ընտրութիւնները կատարվում են մեծ կարգապահութեամբ. ընտրողական առանց ներս են թողնվում ընտրողները 5—6 ական հոգով: Խաբքանչիւր ընտրողին ուղեկցում է ստիկանական պաշտանեայ կամ ուրիշ անձ, որին նշանակվում է ատենախ նախադասը՝ ռատիկանապետը: Այդ ուղեկցողը տալիս է ընտրողին ամեն մի ընտնուելի մօտ մի ընտ: Այս նախադասութիւնը արված է ընտնուելի մօտ գործի նորութեան և ժողովրդին անսովոր լինելու պատճառով: Նախադասական ատենախ խորհրդաւորութեամբ թոյլ է տրված մահաւանդական ձայնաւորների թիւը հասցնել մինչև կէսը բոլոր ձայնաւորների թիւը»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Յունվարի 29-ին հետեւեալ հեռագիրը ստացանք Լճիցից, «Ռուսաց հեռագրական գործակալութեան» միջոցով:

«Կ. Պոլսից հաղորդում են, որ սուլթանը խնդրել է պետութիւնների ղեկավարներից յայտնել իրան, թէ ինչ կարծիք ունեն Ձէյթունի աղքատականութեան պահանջի մասին, որով պահանջում են Ձէյթունը լիբանանի նման կազմակերպել»:

Մեր թղթակիցը մեզ գրում է Բոստոնից, յունվարի 4/16-ից. «Թուրքաց ղեկավար յայտնեց պաշտօնապէս, որ «կայսերական կառավարութիւնը թոյլ չը պիտի տայ, որ իր երկրին մէջ, որ և է օտար ընկերութեան կամ անհատների կողմանէ նպատակաւ խախտվի: Այդ յայտարարութիւնը, — աւելացնում է մեր թղթակիցը, ուղղված է «կարմիր խաչի» ընկերութեան դէմ»:

Մեզ գրում են Կ. Պոլսից, որ Վիկտորիա թագուհու նամակը, որ նա գրել է սուլթանին՝ չէ կազմված այնպէս քաղաքավարի և մեղմ, ինչպէս հաղորդեցին լրագիրները: Ընդհանրապէս նամակը գրված է խիստ ուժով և նոյն իսկ սպառնական տոնով:

Տրապիզոնից մեզ գրում են յունվարի 4-ից: «Այսօր Երզրումի առաջնորդ Դիմանեան և պիսկոպոսը, իր փոխանորդ Վաղինակ Ֆոփեան քահանան և առաջնորդարանի գրագիր Նիդիէ Պուտաղեան, կառքով, ժամը 5-ին տեղս բերուեցան և ուղղակի տարվեցան նաւամատոյց: Այսօր

կէսօրին Դիմանեան նաւով ձանապարհ ընկաւ զէպի Կ. Պոլսի»:

Կ. Պոլսից հաղորդում են «Berliner Tageblatt» լրագրին, որ սուլթանը, պատասխանելով անգլիական թագուհու ինքնազիր նամակին, նորից հաստատում է իր նախկին համակրանքները զէպի թագուհին և անգլիական աղք. բայց մի և նոյն ժամանակ ցաւ է յայտնում այն մասին, որ անգլիական մամուլը ոչ—բարեկամական բացատրութիւններ է տալիս Թուրքիայի դրութեան և անարդար կերպով է վերաբերվում զէպի Թուրքիան: Սուլթանը աւելացնում է, որ անգլիական լրագիրների այդ տեսակ վարմունքը սաստիկ անբաւականութիւն է չարժու. մահաւանդական աղքատականութեան մէջ: Ի վերջոյ սուլթանը յայտ է յայտնում, որ Թուրքիայի և Անգլիայի մէջ կը վերանորոգվին նախկին լաւ յարաբերութիւնները:

«Daily Chronicle» հաղորդում է, որ անգլո-հայկական ընկերութիւնը Լճիցիում կ'օնֆէրէնցիա է դադարեցու, որտեղ պէտք է խորհրդակցեն, թէ պարլամենտը ինչ միջոցներ պէտք է ձեռք առնէ հայոց հարցի լուծման համար: Այդ կ'օնֆէրէնցիային կը մասնակցեն և պարլամենտի շատ անդամներ ու քաղաքական գործիչներ:

«Temps» լրագրի թղթակցի տեղով Մարաշ եկել են 300 հայ զեղչուհիներ, որոնց ամուսինները, գնացած լինելով Ձէյթուն, հաւանօրէն, ընկել են չէրքէզների և քիւրդերի ձեռքը և կոտորվել: Այդ թշուառների տեղը կարեկցութիւն է չարժու. քաղաքի երեք քրիստոնեայ համայնքներն էլ, լուսաւորչական, կաթոլիկ և բողոքական, օգնութեան հասան այդ զեղչուհիներին:

«Standard» լրագիրը, խօսելով հայոց հարցի մասին, նկատում է, թէ դեռ չէ արտադրանք վերջին խօսքը և թէ սուլթանի վիճակը երբեք այնքան խախտու չէ եղել, ինչպէս ներկայումս: Եւրոպայում չը կայ մի պետութիւն, որը իր վրա առնէր Թուրքիայի պաշտպանութիւնը, իսկ Անգլիան մատուցել է արգէն իր վերջին զօնը: Նա էլ ոչինչ չը պէտք է անի Թուրքաց կայսրութեան անկումը փութացնելու համար. բայց եթէ ուրիշ տէրութիւնները այնքան համբերող չեն լինի՝ այն ժամանակ Անգլիան էլ իր խօսքը կ'ստի: Նրանք, որոնք օգնեցին կայսրութեան կործանման, պահպանելով սուլթանին իր մոլորութիւնների մէջ, մեծ օգուտ չեն քաղի իրանց համար՝ սուլթանի հետ ունեցած իրանց այդ համբալ-խութիւնից»:

«Central News» լրագիրը հետեւեալ լուրն է տպագրել.

«Կեսպանների և լիւզօր միլիտարների վերջին նիստի ժամանակ, Կ. Պոլսում, անգլիական դեսպան սըր Ֆրիւս Կէրիի և ռուսաց դեսպան Նէ-լի-օվի մէջ սուր ընդհարում տեղի ունեցաւ: Առաջինը սկսեց յանդիմանել երկրորդին խիստ խօսքերով, թէ իբր նա հաւատարմ չէ մնում այն քաղաքականութեան, որ մշակվել և ծրագրվել է ղեկավարների ընդհանուր խորհրդակցութիւնների ժամանակ, և գործադրում է իր սեպհական քաղաքականութիւնը: Կրանից յետոյ անգլիական դեսպանը կոպիտ կերպով թողեց նիստը և հեռացաւ: Այն ժամանակ Նէլի-օվի դիմեց միւս դեսպաններին յայտնելով, թէ նա չէ հասկանում թէ ինչ է ուղում իրանից դեսպան Կէրիի և ինչով է ինքը պէտք սեպս աւազատանութեան առիթ տուել: Աստորիական դեսպանը պատասխանեց, թէ հաւանօրէն Կէրիի առիթ ունէր»:

«Times» լրագիրը տպագրել է մի հեռագիր Կ. Պոլսից, որի մէջ ասված է, թէ իբր մի քանի օր առաջ ռուսաց դեսպանատան առաջին թարգմանը կազմել է ռուս-թուրքական դաշնագրութեան ծրագիրը: Այդ ծրագիրը առաջարկվել է Եւրոպային, որը զփոխութեամբ նկատել է, թէ այնպիսի մտերմ բարեկամների մէջ, ինչպէս են Ռուսաստանը և Թուրքիան՝ դրաւոր պայմանագիրները աւելորդ են»:

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

«Տարագի» մէջ տպված է. «Մշակին» Բարեկամը անկեղծ պիտի լինի

ուրիշ կերպ մենք չենք հասկանում և չենք ընդունում: Խոսում ենք Ձեզ հետ լրջորեն, պատասխանեցեք և դուք այնպես: Դուք բարեհաճե՞ք է՞լքը «Մշակում» արտատպել մեր պատասխանը, առկայությունը: Այո, այն տողերի գրողն է Տիգրան Նազարյանը: Այո, այն տողերի գրողն է Տիգրան Նազարյանը և ոչ ուրիշ: Խաչատուր Մարումյանը: Պատանջում ենք, որ բացատրեք մեզ ինչ են նշանակում Ձեր այդ բառերը, արդեն կամենում էք ասել, որ Տիգրան Նազարյանը առկա անտեղեկ է հրատարակական գործին, գեղարվեստին, դրամային-գեղարվեստական ստեղծություն, գեղարվեստական բազմաբնույթ, քան դուք, թե՛ գրականում էք, որ Ձեր բարեկամը, Ձեր ուղղությունը դաշնակցից փչրում է բարեկամական շղթաները: Վերջին ենթադրությունը մենք չենք կարող ասել, քանի որ միշտ մենք եղել ենք և ենք «Մշակում» շատ անգամ նույն իսկ առկա բարեկամ, քան նրա երդեալով զինակիցները: Այո, տողերի գրողն է Տիգրան Նազարյանը:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՅ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՐ

Կ. ՊՈԼԻՍ, 26 յունվարի: Այսօր հասա Ռուսական միջնորդ Ստոլով և անմիջապես գնաց Ներքին-Կոստ:

Վ.Ի.ՆԱ, 26 յունվարի: Ստոլովը կը յանձնի վաղը ստիճանի կորուզիչը պրինցի Նամակը, և լուրերին նայելով, պետք է խորի ուղարկել Սոֆիա առանձին ներկայացուցիչ պրինց Բորիսի ուղղափառությունը ընդունելու հանդեպին ներկայ գտնվելու համար:

Վ.Ի.ՆԱ, 26 յունվարի: «Neue Freie Presse»-ին հաղորդում են Հոսթի, որ Կորուզիչի պրինցին հանդիսաւոր կերպով եկեղեցուց մերժելը տեղի չի ունենալ, բայց պրինցին չի թույլատրվի սուրը հաղորդությունը ընդունել:

ՀՈՍԹ, 26 յունվարի: Կորուզիչի լրագրողը սպել է «Ֆերդինանդ ուրաջող» վերնագրով մի խիստ յուրաքանչյուր պրինցի դեմ: Լրագրի կարծիքով, Բորիսի օրթոդոքս եկեղեցու գիրքը մանկը անհրաժեշտ էր ազգայնական նկատմամբ: Ֆերդինանդը, այսինքնից իբր թե՛ արտաքինում է հաստատվելով ժողովից, իսկ Բորիսը չը նայելով որ օրթոդոքս եկեղեցու ծոցն է մանկ կաթիլով կը մնայ մինչև այն օր, երբ, հափառա դառնալով ինքնաշար կերպով կը համաձայնի կոստի փոխել:

ՍՈՍԻՍ, 26 յունվարի: Միջնորդ-նախագահը կը վերադառնա Կ. Պոլսից Ռուսական էկզարխի հետ: Մի լրագիր յայտնում է, որ պրինց Բորիսի օժանդ արգելվում է Ռուսաստանից մի քանի անձանց Սոֆիա գալուստը:

ԼՈՆԴՈՆ, «Daily News»-ին հաղորդում են Հոսթի, որ իշխանուհի Մարիա-Լուիզա Կորուզի խնդրել է պապից լուծել իր ամուսնությունը իշխան Ֆերդինանդի հետ: Պապը, թե՛ աստիճանի վաղաքստ է իշխանի մանկիկատով խորհուրդ տուց իշխանուհուն հրաժարվել այդ տեսակ քայլից:

ԼՈՆԴՈՆ, «Times»-ին հաղորդում են Կ. Պոլսից, որ անցնալ գիշեր ձերբակալված են 12 հոգի, որոնց թվում պալատական գվարդիայի 1 գնդապետ և 2 մայոր:

ՊԵՏԵՐԲՈՐԳ, 27 յունվարի: Նորին Կայսերական Մեծությունը Ֆերդինանդ պրինցին Սոֆիա ուղղած հեռագրի թարգմանությունը:

«Պետերբուրգ», 1896 թ. յունվարի 25-ին:

«Անկեղծ» կերպով չհարձակում են ձեր բարձրությունը ընդունած հարկատուական վճարի առիթով, որի մասին հաղորդում էր ինձ ձեր յունվարի 21-ի նամակով: Իմ ավանդի գեներալ-մայոր կոմս Գոլցինսկի-Կուստովը բերում է ձեզ իմ պատասխանը, և նրան յանձնված է ներկայ լինել իմ անունից ձեր սիրելի, որդու բոլորական ազգի եկեղեցու գիրքը ընդունելու ծխա-կատարություն ժամանակը:

Կատարական հաղորդագրություն: 1886-ին, յետ կանչելով Ռուսական իր ազնվաներին, կայսերական կատարությունը չէր այն ժամանակ յայտնեց, իր նույնների 28 ի հաղորդագրության մեջ, որ նա այդ միջոցը գործադրելով ամենին աչքի առաջ չունի խղել Ռուսական Ռուսաստանի հետ միացնող կապերը: Բոլորիսի—Ռուսաստանի ստեղծածն է և իր գոյությունը պարտական է ուս ժողովրդի ծանր դո-հերին և ջանքերին: Արդեն այդ հիման վրա, կայսերական կատարությունը չէր կարող չը վերաբերվել սրտաղին կարեկցությունը, նրա քաղաքացիական կազմությունը բոլոր երեկոթներին, նրա այժման վիճակին և նրա ապագայ հավատարմությունը: Մենք մի քանի անգամ յայտնել ենք, թե՛ սպասում ենք միայն լսելու իրանց բոլորական կողմից անկեղծ խոստովանություն, թե՛ հարկատու է վերադառնալ գեյի առկա լուս վիճակ, որպեսզի մասնաձևը անցնալը և ակնդր-գնեք իշխանության հետ հաստատվելու յարաբե-րություններ, որոնք հիմնված լինեն փոխադարձ վստահության վրա և որ և է չափադրական զորավոր հեռու լինեն: Այդ ուղղությամբ առա-ջին քայլը արդեն արված է, իշխան Ֆերդինանդը գիմել է թագաւոր Կայսրին գրաւոր կերպով խնդրելով ուղարկել Սոֆիա մի յատուկ ուս ներկայացուցիչ անկախապես պրինց Բորիսի ուղղափառություն ձեւով միջոցառում հանդիսին ներկայ լինելու համար:

«Ներք տարի առաջ, երբ լուր ստացվեց, թե՛ Ռուսական իր ազնվաներին կատարությունը չէր այն ժամանակ, 1893 թ. իր իրար 21-ի իր հաղորդագրության մեջ, զգուշացրեց բոլոր բոլորականներին, առանց խորություն կատարություն, այն վստահի մասին, որը սպասում է մի ժողովրդի, որը պատրաստվում է հրաժարվել իր քաղաքական ամենաուրախական առանցություններից: Ամենահին ժամանակներից՝ արեւելքի իր համա-րին ջեղի աղաներին կարեկցությունը վերաբերվող Ռուսաստանի ձայնը խախտեց բոլորականի սիրտը: Բոլորականը աղբը և նրա կա-տարությունը հասկացան, թե՛ անհրաժեշտ է ամրացնել և պատուարել ուղղափառ կրօնի տի-րապետությունը երկրում, որպիսեւ աչք կրօնը հանդիսանում է դառնական այն անխախտելի հո-գեւոր կապի, որ միացնում է Ռուսաստանը իր ազատած Ռուսականի հետ: Այս լուրը Ռուսաս-տանում ամեն տեղ ընդունվեց ուրախալի համա-կրթությամբ:

«Ողբերկած մեծահոգեություն և գեյի Ռուսա-րին անհեշտ անկեղծ բարեպաշտությունը զգացումներով, թագաւոր Կայսրը ընդունեց պը-րինց Ֆերդինանդի խնդրել և Բարձրագոյն բարե-հաճեց յարգել նրա միջնորդությունը, ուղարկելով Սոֆիա իր անունից, գեներալ-մայոր կոմս Գոլ-ցինսկի-Կուստովին, իբրև վկա-կրթաւոր պը-րինցի որդու միջնորդական ծխապատարություն ժամանակը:

ՍՈՍԻՍ, 27 յունվարի: Մարիա-Լուիզա իշխա-նուհին կիրել իշխանի հետ գնաց արտասահման: Ֆերդինանդ պրինցը հանապարհ ձգեց իշխանու-հուն մինչև Յարիբորգ:

ՊԵՏԵՐԲՈՐԳ, 28 յունվարի: Պալատի միջնորդ կոմս Վ. Բորիսով-Կայսրը արձակուրդ ստացաւ: Միջնորդական կատարությունը յանձնված է նրա օգնական գեներալ-լեյտենանտ բարոն Ֆրի-դերիկսին: Պետերբուրգի բոլոր լրագրիները, բացի «С.-Петербург. Ведомости», ողջունում են Բորիսի ուղղափառությունը ընդունելը, ամենը պրինց Ֆերդինանդի այդ որոշման մեջ տեսնում են Ռուսականի ապագայ կանանաւոր դարգաւան երաշխաւորություն:

Ս. ՊԵՏԵՐԲՈՐԳԻ ԲՈՐՍԱ	
Յունվարի 26-ին	
Լոնդոնի վրա 10 ֆունտ արժէ . .	94 ր. 30 Կ.
Բեռլինի վրա 100 մարկ	45 > 87 3/8
Պարիզի վրա 100 ֆրանկ	37 > 27 3/8
Ռոսկի արժէ . .	7 > 50
Մադրասի կուպոններ	148 > —
Բորսայի գրակոմ	7 1/2 > —
49/0 պետական թէստա	97 > 75
Դրեքին 59/0 առաջին փոխաւոր. .	280 > 50
— երկրորդ	257 > —
59/0 զրաւ. թղթ. ազն. կալ. բանկի	215 > 50
59/0 պետական երկաթուղ. թէստա	100 > 50
49/0 ներքին փոխաւորություն . .	97 > 75
41 1/2/0 զրաւ. թղթ. ազն. կալ. բանկի	100 > —
Ազն. կալ. Պետ. բանկի խաղաղութ. .	100 > 50
41 1/2/0 վկայակ. գրաւ. հող. բանկի	100 > 50
Փոխ. կրեդիտ. ընկեր. մասա . .	152 > 25
Պետերբուրգի քաղաքային կրեդիտ	101 5/8 > —
Ընկերությունն օրիգինալները . .	101 5/8 > —
Մոսկվայի քաղաք. օրիգինալները . .	100 5/8 > —
Սեյլայի	99 > 25
Թիֆլիսի կալ. բանկի 60/0	— > —
59/0	— > —
Գոլցինսկի 60/0	— > —
59/0	— > —

Խաղաղի՝ ԱՆԷՔՍԱՆԻ ԲԱՆԿԱՆԻ
Հրատարակել՝ ԱՆԷՔՍԱՆ ԱՐԾՈՒՆԻ

ՅԱՅՅԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՏԻԿԻՆ Շ. ԵՒԱՆԳՈՒԼԵԱՆՑՑ
որ աւարտել է Պետերբուրգում կար ու ձևի արհեստը և ունի գիւպլում

ՏԱԼԻՍ Է ԴԱՍԵՐ

մաուչելի գնով Գլոգլինսկի և Ֆրանսիական մեթոդով, թե՛ իր տանը և թե՛ աներում:

Ցանկացողները թող դիմեն Է. Ժան-ա-դին գրաւորաւ, վերամիտոկայա փո-ղոց: (№ 12) 1—6

ՊՐՈՖԷՍՈՐ Վ. Ֆ. ԼԷՐԻ
Հիւսիսային և մարեր նախադաշակող շուտով կը տայ:

ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ

1—1

ՎՐԱՅ ԱՋՆՈՒԱԿԱՆՆԵՐԻ ԹԱՏՐՈՆԻՍ
Երեքշաբթի, 30-ին յունվարի,
Հայ գերատանական ընկերությունը կը ներկայացնէ

ՂԱՐԱՐԱՂԻ ԱՍՏՂԱԳԵՏԸ

Պատմական իրողություն 5 արար. Գիւ. Ա.
Սարգսյանի և Ա. Վարդի
Մասնակցում է ամբողջ խումբը:
Սկիզբը 8 ժամին է:
Տեղերի գինը սովորական է
Բեթիսոր Յ. Արեւան

Չորեքշաբթի, յունվարի 31-ին, Վարդա-նանց տունի առիթով, Բագուի կուրբի դաշ-իձում կը լինի ԿԱՐԱ-ՄՈՒՐԱՅՈՒ

ՀԱՄԵՐԳԸ

մասնակցությունը պ. պ. Արիստակեսի, Բեգումյանների և խմբի: Ծրագրում հե-տաքերը են. Պարսկական Գրիգոր Ար-րուսուհի, երաժշտ. Կարա-Մուրադյան, Պր-րիստուրի թատերական երգը, երաժշտ. Խեմ-սյի, և արմենիական գործերը:

2—2

«ԵԱՍԼԻ» ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

ՄԱՆԿԱԿԱՆ ՀԻՒԱՆԳԱՆՈՑՈՒՄ

Ընդունվում են սուր-վարակիչ հիւանդություն-ներով (կարմրուկով, ծաղիկով, քոթիչով, դիֆ-տերիայով) հիւանդացած երեխաներ: Ծծկեր երեխաները կարող են ընդունվել իրանց մայ-րերի կամ դպեակների հետ: Ընդունելությունը ամեն օր: Բժշկությունը և խնամատարությունը ձր է: Հասցեն՝ Վերա, Ծղնեւսկի փողոց, տուն խաղապիսի: (№ 9) 4—10

1895 թ. նոյեմբերի 10-ից ստացվել է ՊԱՍՏԵՐԻ ՍԵՍՏՄՈՎ պատրաստած

ԲՐՈՒՍԱՅԻ ԲՈԺՈՅԻ ՍՊԻՏԱԿ ՏԵՍԱԿԻ ՍԵՐՄԸ

որ արդեն անցել տարիներից յայտնի է Կովկասում և Պարսկաստանում իր յատկու-թիւններով, և տուած առատ բերքով, «ԵՎՈՆՈՍԻԳԻՍ» Ֆերմայից:

Ցանկացողները կարող են պահանջել Թիֆլիսի Շիրամպազուլթեան կայարանում՝

ընկերաց յետոյ:

Գնել ցանկացողները կարող են գիմել՝ ԲԱՌՈՒՄ, ԹԻՖԼԻՍ, ԲԱԳՈՒՆ, ԵԶԵՐ, ՄՆԱՅԱԿԱ-ՆԵԱՆՆԵՐԻՆ, իսկ ՆՈՒԻԻ ԱՂԱ ՄՈՍԿՈՎ ՄԱՏԻՍՈՎԻՆ:

Այս հասցեով Բրա. МНЦАКАНАНЦЪ, БАТУМЪ կամ ТИФЛИСЪ կամ БАКУ. (№ 138) (Ե. շ.) 18—24

ՀԱՅ ԳՈՐԾԻԶՆԵՐԻ ՊԱՏԿԵՐՆԵՐԸ

Լուսանկար Տէր-Ղևոնդեանի մօտ վաճառվում են հետեւեալ հայ գործիչների պատկերները՝

Հոգեբանականներ. — հինգերորդ դարու գործիչներից՝ ՍԱՀԱԿԻ և ՄԵՍՐՈՊԻ: Ժամանակակիցնե-րից՝ ՆԵՐՍԷՍ Վ. ԳԵՈՐԳ IV, ՄԱԿԱՐ և ՄԿՐՏԻԶ Կովկասի, ԳՐԻԳՈՐԻՍ ԱԼԷԱՌՃԵԱՆԻ (կա-թողիկոս Կիլիկիայի), ՄԱՏԻՍՈՎ ՊԱՏՐԻԱՐԻ ԻԶՄԻՐԼԵԱՆԻ, ԱՐԻՍՏԱԿԷՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՓՈՍ ՍԵՐԱ-ԿԵԱՆԻ, ԽՈՐԷՆ ՆԱՐԵԿԵՏԻ և ուրիշ արժանաւոր հոգեբանականներ:

Նոյն տեղը վաճառվում են. — ԳՐԻԳՈՐ ԱՐՄՈՒՆԻ, ԲԱՅԵԻ, ՌԱՅԱՅԵԼ ՊԱՏԿԱ-ՆԵԱՆԻ, ԵՆԵՆԵՅԻ, ՍՏԵՓԱՆՆՈՆ ՆԱԶԱՐԵԱՆԻ, Յ. ՊԱՐՈՆԵԱՆԻ, Պ. ԱՐԱՄԵԱՆԻ (բոլոր գերերում նկարված), ԽՄԲԱԳԻՐՆԵՐԻ, կենդանի ԳՐՈՂՆԵՐԻ, նշանաւոր հայ ԿԱՆԱՆԵՑ՝ Ս. ՏԻՄԱՐԻ, ՄԱՐԿԱՄ ՄԵԼԻԻ-ԱՂԱՄԱԼԵԱՆ-ԱՐՄՈՒՆԻ, «ՄԵՍԿԻ» ԱՆՈՒՍԱԿԻՏԵՐԻ յօրեւանական ալբոմը, նմանապէս ուրիշ զանազան գործիչների լուսանկարները:

Վերջինեալ պատկերները արժեն մեծագիւր 3 ռուբլի, ՄԻՋԱԿ ՊԱՏԿԵՐՆԵՐԸ 1 ռուբլի, ԿԱ-ԲԻՆԵՍՈՒՆԻ կոչված պատկերները՝ 40 կոպէկ, ՎԻԶԻՏ կոչված պատկերները՝ 20 կոպէկ:

Հասցեն՝ ТИФЛИСЪ. Фотография Теръ-Гевондянца (На Михайловск. мосту). Հանապաւոհ-ածախը գնողի վրա է:


(№ 117) 7—10

ԿԱԿԱՆ ԲԼՈՕԿԵՐ

ՍՆԵԴԱՐԱՐ ԻՄԻՉԲ, արկղիկներում, 1/1, 1/2, 1/4 և 1/8 կիլոգրամ:
(GRAND PRIX) Բարձրագոյն պարգէն: Անուկրպէտի 1894 թ. համաշխար-հային ցուցահանդիսում:

Գլխաւոր պահանջող՝ գեղարարական ապրանքների Բարձրագոյն հաստատված Կովկասեան ընկերությունը Թիֆլիսում:

(№ 6) (Ե) 3—50



ՄԻՋՈՑ ԽԱՐԾՈՒԹԻՒՆԻ ԴԵՄ
Բժշկական գէպարամէտից թոյլա-արված
ՕԼՖԱԿՏՈՐԻՈՒՄ ՆՈՒԳԻ-ԼԻՆ

Մ. Լ. Ժ. Ի. Մ. Ո. Ի. Ն. Ս. Կ. Ո. Ի.
Ծախվում է 40 կոպէկով:

Գեղադործական Ապրանքների վաճառման Կովկասեան ընկերությունը մշ. Թիֆլի-սում:

(№ 22) 26—30